ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«14» ապրիլի 2022թ. № 02/03.5/2271-2022

«ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ
Էլ. փոստ՝ tender@garaj.am

Հարգելի՛ պարոն Գասպարյան,

Հայտնում եմ, որ Արտակարգ իրավիճակների նախարարության և «ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ի միջև 2022թ-ի հունվարի 31-ին կնքված թիվ ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21 պայմանագրի շրջանակներում «ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ն չի կատարել ստանձնած պարտավորությունները, մասնավորապես ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության կողմից տրամադրված հայտերով ծառայությունները չեն մատուցվել: Նախարարության կողմից 2022թ. փետրվարի 28-ի թիվ 02/11.2.3/1173-2022 գրությամբ ներկայացվել է ժամկետ սահմնված խնդիրը լուծելու համար, սակայն մինչ օրս ծառայությունները չեն մատուցվել:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.10-րդ կետը՝ նախարարությունը միակողմանի լուծում է ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21 ծածկագրով Պայմանագիրը:

Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրեր՝ Հավելված 4.1 և Հավելված 5.1), համաձայն որակավորման ապահովման 1.4 կետի և պայմանագրի ապահովման 1.6 կետի, կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով,

կներկայացվի «Արարատբանկ» ՓԲԸ ՀՀ ՖՆ գործառնական վարչության N900008000698 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

Invalid signature

X

ԼԻԼԻԹ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Signed by: MIRZAKHANYAN LILIT 6107860169 ԼԻԼԻԹ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Կատարող՝ Ֆինանսատնտեսագիտական
վարչության գնումների կազմակերպման բաժնի
գլխավոր մասնագետ Արմինե Գալուստյան
Հեռ՝. 012 31 77 22